ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Տաշիր **11/09/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Վահե Անախասյանը, Ռուզաննա Ավդալյանը, Կարեն Բաղդասարյանը, Նարինե Խաչատրյանը, Ջոն Պողոսյանը, Գուրգեն Ջավուկցյանը, Անուշ Սուքիասյանը, Վահան Ստեփանյանը, Արման Վարդանյանը, Իզաբելա Տոմեյանը

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>
Նաթելլա Մուրադյան, Սամվել Շահբազյան, Հովիկ Մարկոսյան, Նաիրա Մարտիրոսյան, Էմիլ Գրիգորյան, Անժելա Մարտիրոսյան

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Էդգար Արշակյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նունե Սոլոյանը</u>

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ (ԱՐՏԱԳՆԱ)ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու (արտագնա) 2023 թվականի նոյեմբերի 9- ի հերթական (արտագնա) նիստի օրակարգը՝
1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 31-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

2. «Դրուզյա» սահմանափակ պաասխանատվության ընկերության հետ սերվիտուտի պայմանագրեր կնքելու մասին,
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի N21-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին,
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին,
5. «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը անդամակցելու և Հայստանի Հանրապեության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 14-ի N83-Ա և Հայստանի Հանրապեության Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 14-ի N43-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին,
6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքին պատկանող հողամասերը աճուրդով օտարելու մասին,
7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N40-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին,
8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 9-ի N113-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N31-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N31-Ն որոշման NN1-6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN1-6 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120-Ն/

Լսեցին
«ԴՐՈՒԶՅԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանարպետության կառավարության 2001 թվականի ապրիլի 2-ի N286-Ն որոշումով հաստատված կարգի 44-րդ կետի ը) ենթակետով, 73-րդ և 76-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի հունիսի 19-ի « «Դրուզյա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի տրամադրման մասին » N1090-Ա հրամանը ՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքին սեփականության իրավուքով պատկանող 06-081-0102-0019 կադաստրային ծածկագրով, 6,6772 հա մակերեսով և 06-081-0102-0020 կադաստրային ծածկագրով 12.9414 հա մակերեսով հողամասերում երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու համար կնքել սերվիտուտի պայմանգրեր օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցող «Դրուզյա» սահմանափակ պատասխանատվության ընկերության հետ:
2.Սերվիտուտի պայմանագրերի ժամկետները սահմանել երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/3076 թույլտվության ժամկետով:
3. Սերվիտուտի վճարները սահմանել 47 000 (քառասունյոթ հազար) ՀՀ դրամ՝ 06-081-0102-0019 կադաստրային ծածկագրով 6.6772 հա հողամասի համար և 91 000 (իննսունմեկ հազար) ՀՀ դրամ՝ 06-081-0102-0020 կադաստրային ծածկագրով 12.9414 հա հողամասի համար:
4. Սերվիտուտ սահմանելու մասին պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման , իսկ պայմանագրերից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 121-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N21-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎԵՏԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N21-Ա որոշումը :

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎԵՏԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով `

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123-Լ/

Լսեցին
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՔՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N83-Ա ԵՎ ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՔՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N43-ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻ

/Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և « Նորմատիվ իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով , 37-րդ հոդվածի 1-ին մասով `

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Անդամակցել «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը:
2. Հայաստանի համայնքների միություն»իրավաբանական անձանց միությանը վճարել համապատասխան անդամավճար:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անանց միությանը անդամակցելու մասին» N83-Ա որոշումը:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անանց միությանը անդամակցելու մասին» N43-Ա որոշումը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 124-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 3-րդ կետով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանարպետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասը օտարել աճուրդով և սահմանել մեկնարկային գինը՝ համաձայն հավելվածի

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 125-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N40-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով « Նորմատիվ իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով , 33-րդ հոդվածի 3-րդ մասով ՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի « Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N40-Ա որոշման հավելված 1-ի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ դ) ենթակետով՝
«դ) Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված երեխաների համար»
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի « Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N40-Ա որոշման հավելված 2-ի լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով՝
«5. Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված երեխաների համար.
1) երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումը, անձնագրի (նույնականացման քարտ) պատճենը
2) «Բնակության վայրի մասին» տեղեկանք ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայքնապետարանից»:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 126-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N113-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով « Նորմատիվ իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով , 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 9-ի « Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին » N113-Ա որոշման 1-ին կետի «անավարտ

տաղավարներ» բառերը փոխարինել « ծածկեր » բառով և «տաղավարի» բառը «ծածկի» բառով

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 127-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 8-ը, ժամը՝ 14:30-ին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 128-Ա/

Ավագանու անդամներ

ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՎԻԳԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԿ ՄԱՐԴՈՅԱՆ

ՍՈՒՍԱՆ ՄԱՐԴՈՅԱՆ

ԱԻԴԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՎԻՏԱԼԻ ՅՈՒՍՈՒԲՈՎ

ԱՐՄԵՆԱԿ ՍՈԼՈՅԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ՍՈՂՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Նունե Սոլոյանը

_____